

Գ Ի Ե Ր Գ Բ Է Լ Լ Ե Մ Ի

ՀԱՐԻԻՐ ՏԱՐՈՒՑ ՅԵՏՈՅ

ՌՈՒՍԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԻՑ

ՎԵՐԱԾԵՑԻՆ ՀԱՅԵՐԷՆԻ

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ և Ռ. ԽԱՆԱԶԱՐԵԱՆՑ



Թ Ի Ը Լ Ի Գ

Արագատիպ Ա. Զուլթաթելաճէի, Նիկ. 21

1904

Յաւելուած «ԼՈՒՄԱՑ» հանդիսի.

Дозволено цензурою, Тифлисъ, 6-го Апрѣля 1904 г.

ԱՌԱՋԱԲԱՆ

Քոստոնի Հոռամենտ-Կոլլէջի պատմական մասը՝ 28-ն դեկտեմբերի 2000 թվականի.

Քսաներորդ դարի վերջում ապրող և մեր ժամանակի բաժնեկիցները վայելողներս դժարութեամբ կարող ենք ներկայացնել մեզ, որ մեր հասարակական կազմակերպութիւնը մի դարից աւելի հին չէ։ Դժար է նրա համար, որ մեր ներկայ հասարակական կարգն ու կենցաղավարութիւնը այնքան պարզ են և այնքան համապատասխան առողջ դատողութեան, որ ոչ թի հաւատալը չի գալ, որ դրանք մի հարիւր տարի առաջ կարող էին ուրիշ կերպ եղած լինել։ Բայց ստուգապէս յայտնի է արդէն և ճշմարիտ փաստերով ապացուցւած, որ դեռ տասնիններորդ դարի վերջերում ամենքն էլ հաւատացած էին, որ իրանց կենցաղավարութեան և արդիւնաբերութեան տգեղ սխառտմը գոյութիւն է ունենալու մինչև յաւիտեան։ Չափազանց զարմանալի և մինչև անգամ անհաւատալի է թշոււմ, որ այսպիսի մի ծայրայեղ փոփոխութիւն՝ թէ բարոյական և թէ նիւթական կողմից կարող է կատարւած լինել այսքան կարճ ժամանակի ընթացքում։

Այս գրքի նպատակն է՝ օգնել նրանց, որոնք կը ցանկանային որոշ հասկացողութիւն ունենալ տասնիններ և քսաներորդ դարերի միջև եղած հակապատկերների մասին, առանց դիմելու պատմութեան չոր ու ցամաք ճառաբանութիւններին։ Իմ ուսուցչական փորձից զիտենալով, որ չոր առարկաների սովորելը ձանձրալի է համարւում, ես աշխատել եմ գրքիս խրատական չոր ոճը փափկացնել վիպասանական նիւթով ու ձևով, որ իմ կարծիքով պէտք է գրաւի լինի նաև ինքն ըստ ինքեան։ Այն ընթերցողներս, որոնց համար մեր նորագոյն հաստատութիւնները և նրանց հիմնական սկզբունքները բոլորովին զբարդ ու հասկանալի են, այդպիսի ընթերցողները բժիշկ Լիտի

բացատրութիւնները շատ տարրական կը համարեն, բայց պէտք չէ մոռանալ, որ բժշկի տարօրինակ հիւրը մեր ունեցած կարգերի մասին ոչ մի գաղափար չունի. սրա համար էլ ահա գիրքն այնպէս է գրւած, որ սրա ընթերցողը՝ ով էլ որ լինի՝ պէտք է նոյն հիւրի դրութեան մէջ դնի իրան, այսինքն՝ երեւակայէ, որ ինքն ևս դեռ ոչինչ չը գիտէ և նոր պիտի գաղափար կազմէ իր շրջապատող և արդէն լաւ ծանօթ հանգամանքների մասին:

Դարձեալ մէկ խօսք: Տասնիններորդ դարի վերջերում բոլոր նշանաւոր գրողների և հոետորների ընդհանուր բնաբանը ապագան էր և ոչ անցեալը: Նրանց դատողութեան նիւթը ոչ թէ արդէն կատարւած առաջագիմութիւնն էր, այլ այն ապագայ նպատակը, որին ցանկանում էին հասնել միշտ ձգտելով դէպի առաջ և դէպի վեր, մինչև մարդկութիւնը կատարէր իր բուն, թէև անիմանալի, նշանակութիւնը: Այդ շատ լաւ էր. բայց իմ կարծիքով՝ ապագայ դարերի մարդկութեան զարգացման աստիճանի մասին գաղափար տալու համար, պէտք է այդ ապագան շինել ներկայ, իսկ ներկան անցեալ և սկսել «յետ նայել»:

Յուսալով՝ որ այս գիրքը բախտ կունենայ գտնելու այնպիսի ընթերցողներ, որոնք սրա բովանդակութիւնը իրանց համար շատ օգտակար կը գտնեն, իսկ սրա ձևի ու ոճի մըրաներողամիտ աչքով կը նայեն,—ես կը հեռանամ ու իմ տեղը կը տամ պարոն Իւլիան Վեստին, որ նա ինքը խօսի իր մասին ընթերցողների հետ:

Է. ԲԷԼԼԱՄԻ

I.

Սա ծնւել եմ Բոստոնումը 1857 թւականին:

«Ինչպէս թէ 1857 թւականին». երեւի ուզում էք տեսլ 1957 թւականին.—կը նկատէ ինձ ընթերցողը:

—Ոչ, ես չեմ սխալուամ: 1857 թւականի ծննդեան տօնի քրկրորդ օրը (և ոչ թէ 1957 թւականին) կէս օրից յետոյ ուղիղ չորս ժամին ինձ վրա առաջին անգամը փչեց Բոստոնի արեւելեան քամին, որ այն ժամանակն էլ նոյն խտութիւնն ունէր, ինչպէս և ներկայ 2000 թւականին:

Խոստովանում եմ, որ իմ ասածս շատ տարօրինակ պիտի թւայ ընթերցողիս, որովհետեւ ես դեռ երիտասարդ մարդ եմ—ըստ երևութին հազիւ 30 տարեկան, բայց դուրս է գալիս, որ ես ծնւել եմ մեզանից հարիւր քառասուն երեք տարի առաջ: Ընթերցողն իրաւունք ունի դէն շարտելու իմ պատմութիւնը, ենթադրելով, որ ես ծաղրում եմ նրա դիւրահաւատութիւնը: Հաւատացնում եմ ազնիւ խօսքով, որ այդպիսի դիտաւորութիւն չունիմ ես, և հէնց ինքն ընթերցողն էլ կը համոզւի, եթէ բարեհաճի շարունակել կարդալը: Վերջապէս կարծեմ ներելի է ենթադրել, որ ինքս աւելի լաւ իմանամ, թէ երբ եմ ծնւել ես, քան թէ կարող է գիտենալ ընթերցողը, այս պատճառով ես կը շարունակեմ իմ պատմութիւնը:

Ամեն մի դպրոցի աշակերտ էլ գիտէ, որ 19-րդ դարի վերջումը ոչ այսպիսի քաղաքակրթութիւն կար, ինչպէս հիմա է և որա նման մի բան, բայց միայն որա տարբերը կային այն ժամանակ, և արդէն խմորւում էին: Այսուամենայնիւ ոչ մի բան չկար այն ժամանակ, որից կարելի լինէր գուշակել, թէ կարելի կը լինի փոփոխութեան ենթարկել զարեւրով առաջ դասութիւն ունեցող չորս դասակարգերը, որոնց աւելի յարմար կը լինէր ցեղեր կամ ազգեր անւանել, քան թէ դասակարգեր: Նւ իրաւի, հասարակութեան այն ժամանակի դասակարգերն իրարից աւելի խիստ կերպով էին տարբերում, քան թէ մեր

ժամանակի ազգերը միմեանցից: Ինչ նմանութիւն կարող է լինել հոյակապ պալատներ ունեցող հարուստի և գլուխը վայր դնելու տեղ չունեցող աղքատի միջև, կամ ինչ մօտաւորութիւն՝ երկնքի երեսը և երկրի խորքերը քննող գիտնականի և գրի սեն ու սիպտակը չլուրդ անտւս տգէտի միջև:

Սա ինքս համ հարուստ էի, համ ուսեալ, հետևաբար ես ունէի բախտաւոր լինելու այն բոլոր պայմանները, որոնցից օգուտ քէին քաղում բախտից երես առածները: Սա տալում էի շատ ճոխ և ընկած էի կեանքի զոնազան. բաւակա՜նութիւնների և վայելքների ետևից: Այն բոլոր հարստութիւնը, որ ես վատնում էի շուայլաբար ու անխայ, բնաւ չէր հասնում, որովհետև շատ շատերը իրանց երեսի քրտինքով աշխատում և լցնում էին իմ դրամարկը: Սա ոչ մի ծառայութիւն չէի անում այն խեղճ մարդկանցը, որոնք այսպէս օր ու գիշեր քրտինք էին թափում ինձ համար: Կարծես նրանք ծնւած լինէին միայն աշխատելու համար, իսկ ես—վատնելու իմ զւարճութեան համար: Իմ ծնողներս ու պապերս էլ ինձ նման էին եղել և՛ ես սպասում էի, որ իմ յետնորդներս էլ, եթէ կը լինէին, կապրէին ինձ պէս անհոգ և փառաւոր կեանքով:

Ընթերցողը կը հարցնէ թերևս, թէ ես ինչպէս կարող էի ապրել, առանց ում և իցէ մի օգուտ տալու: Եւ ինչո՞ւ համար էին մարդիկ պահպանում ու պաշտպանում մէկի ձրիակերութիւնը, քանի որ նա կարող էր մի որևիցէ օգուտ տալ: Սրա պատասխանը շատ պարզ է. իմ պապի պապը մի այնպիսի գումար ստակ էր թողել, որ նրանով կարող էին ապրել իր բոլոր յետնորդները: Գուցէ կենթադրէք, որ այդ գումարը պէտք է որ շատ խոշոր լինի եղած, որը երեք սերունդ յաջորդաբար ուտելով և ոչինչ չլինելով չեն կարողացել սպառել, բայց բանն այդպէս չէր: Սկզբումն այդ գումարը շատ մեծ չէր, բայց յետոյ յաջորդ սերունդները նրանով սկսեցին իրանց փոքրը հաստացնել, փոքրիկ գումարն սկսեց խոշորանալ: Այս ի հարկէ մի տեսակ կախարդութիւն կը թւայ, թէ ինչպէս մի բան շարունակ գործ է անում և չի մաշում, շարունակ բորբոքւած և վառւած է ու չի այրում, շարունակ սպառում է և չի հատնում: Բայց այստեղ ոչ մի կախարդութիւն չկար, այլ մի այնպիսի ճարպիկութիւն, որի գործադրութիւնը մեր նախնիք վերին աստիճանի կատարելագործութեան էին հասցրել և որ հիմա բախտաւորապէս անհետացել է: Այդ

այն ճարպիկութիւնն էր, որով մեր նախնիք կարողանում էին իրանց ապրելու ծանրութիւնը բարձել ուրիշների վրայ: Ի հարկէ ճարպիկ լինել ամենքն էլ ուզում էին, բայց ով որ աւելի էր ճարպիկ լինում, նա էր հասնում այդ նպատակին: Այդպիսիների համար չէին ասում, թէ նա ոչինչ չէ շինում, և ուրիշներն են նրա համար գործ շինում, այլ թէ՛ նա ապրում է իր կապիտալի տոկոսիքով, այսինքն՝ իր փողի շահովը կամ ունեցած հարստութեան եկամուտովը: Մեզ համար հիմա շատ մութն է թւում այս, և ձանձրալի կը լինէր բացատրել, թէ հասարակութեան վաղեմի կազմակերպութիւնը ինչպէս էր այդ բանը կարելի դարձնում: Կասեմ միայն, որ կապիտալի տոկոսիք ասուածը մի մշտական հարկի պէս բան էր, որ առնւում էր ամեն մի երեսի քրտինքով ձեռք բերւած արդիւնքից՝ այսինքն՝ ապրանքից: Աւելի էլ պարզ ասեմ: Ամեն մի աշխատաւոր իր արտադրած բանի համար պէտք է հարկ վճարէր փողատէրերին: Այդ հարկն էր ահա որ ասւում էր տոկոս, որ աւելացնելով կապիտալի վրայ նոյնպէս դառնում էր կապիտալ՝ նորից տոկոս բերելու համար և այսպէս անընդհատ...

Անկարելի է ենթադրել, որ այս անգլթութիւնը մեր նախնիք նկատած չլինին և դատաքննած ու դատաւիւտած: Ընդհակառակն՝ հին ժամանակներից սկսած շատ օրէնսդէտներ և՛ բարոյագէտներ միշտ աշխատել են ոչնչացնել տոկոս ասւած բանը, կամ շատ փոքրացնել: Բայց նրանց այդ ձգտումը յաջողութիւն չի ունեցել, որովհետեւ հասարակութեան հին կազմակերպութիւնն այդ հանգամանքը շատ բնական է համարել: Դեռ 19-րդ դարի վերջերում պետութիւնների մեծ մասը հրաժարւում էր այս խնդիրը լուծել օրքան և իցէ բաւարար կերպով:

Թէ ինչպէս էին ապրում այդ ժամանակւայ մարդիկը, դրա մասին մի ընդհանուր գաղափար տալու համար պէտք եմ համարում մի օրինակ բերել: Սրեակայեցէք մի ահագին կառք, որի մէջ մարդիկ լինէին նստած առօք-փառօք և քաշողներն էլ մարդիկ լինէին և պարտաւորւած առաջ տանել նրան մի անհարթ և քարքարոտ ճանապարհով: Կառապանը քաղցածութիւնն էր և նա էր, որ թոյլ չէր տալիս, կանգ առնի կառքը, թէև չարժւում էր շատ դանդաղ: Չը նայած այդ դժուարութեանը, միջի մարդիկը չէին ուզում դուրս գալ գոնէ դառիվեր տեղերում: Շատ լաւ էր կառքում եղողների դրութիւնը, ազատ

էին շողից ու ցրտից, փոշուց ու ցեխից, զմայլում էին շրջակայքի բնութեան տեսարաններով և դատաքննում ու դատափետում ուժասպառ եղող լծածներին: Ով ասես որ չուզե՜նար կառքի մէջ նստած լինել և ոչ թէ նրանում լծած: Սրա համար էլ ամեն ոք աշխատում էր տեղ ստանալ կառքումը և նոյն տեղը թողնէր նաև իր յետնորդներին՝ իբրև ժառանգութիւն: Այս նպատակին հասնելը շատ էլ հեշտ չէր. այդ բանը ձեռք էր բերւում զանազան մաքառումներով և մրցութիւններով: Կառքային կանոնով՝ ամեն ոք կարող էր իր տեղը տալ ուրիշին, ում որ կամենար: Բայց լինում էին և զանազան պատահումներով իրանց տեղիցը զրկւողներ: Այդ տեղերը թէև շատ յարմար էին և գրաւիչ, բայց և շատ էլ խախտում էին և անհաստատ: Մի յանկարծական ցնցումից մարդիկ դուրս էին թռչում. կառքից և վայր թափւում գետնին: Այս տեսակները պէտք է խկոյն լծէին և քաշէին այն ծանր կառքը, որի մէջ քիչ առաջ նստած էին այնպէս առօք-փառօք: Շատ բնական է, որ այս կերպով տեղ կորցնելը համարէր մի սոսկալի դժբախտութիւն: Այս դժբախտութիւնը սև ամպի նման պտըտւում էր միշտ կառքում նստողների վրայ, և ամենքի էլ միակ հոգան այն էր, որ ազատ մնան նրա հարւածից:

Բայց ներքի կը լինի հարցնել. միթէ այդ մարդիկը միայն իրանց մասին էին մտածում: Միթէ անարդարութիւն չէր թւում նրանց իրանց ճոխութիւնը, երբ տեսնում էին իրանց եղբայրների և քոյրերի անտանքի թշուառութիւնը, կամ միթէ չէին խղճահարւում, երբ տեսնում էին, որ իրանց սեփական ծանրութիւնովը մեծացնում են լծածներին բեռը:

Ինչպէս չէ: Կառքում նստողները շատ անգամ գթութիւն էին ցոյց տալիս լծածներին, դեղ ու ճար գնելով վիրաւորներին ու խեղացածների համար, որ իրանք չգրկւին կառաքարչ ուժերից, խրախուսում և ոգևորում էին, որ հաշտ մնան իրանց վիճակի հետ. շատերը նոյն իսկ յուսադրում էին, որ միւս կեսըքումը բանը պիտի փոխւի—նստողները պիտի լծին, իսկ լծողները պիտի նստեն կառքումը: Սրբ որ ճանապարհի դժարաքարչ տեղերից ազատում էին, բոլոր նստողներն զրւում էին հոգեկան թեթևութիւն և հանգստութիւն, բայց ոչ թէ նրա համար որ թշուառ կառաքարչները սկսեցին մի փոքր շունչ քաշել և ֆիզիքական թեթևութիւն զգալ, այլ նրա համար, որ կառքն անվտանգ դուրս եկաւ, չը շրջեց և բոլորին

էլ չը զրկեց իրանց նստարաններէց:

Կառքումը նստողներէց ով որ ամենից շատ էր զգում լծածների անտանելի վիճակը, նա ամենից էլ պիէ՞ղ էր կրպշում իր նստարանին, որ չլինի թէ յանկարծ գլուխի և ընկնի լծածների շարքը: Եթէ նստածները հաւատացած լինէին, որ գլուխը ոչ մի վտանգ չկայ, նրանք հազիւ թէ անէին և այն չնչին ողորմութիւնը, որ տալիս էին թշուառներին իբրեւ կապի և սպեղանու գին:

Սա գիտեմ, որ քսաներորդ դարի տիկիներին և պարոններին իմ այս ասածը պիտի թւայ մի չը լուած տմարդութիւն բայց ասածս ճշմարիտ է, և երկու փաստով կարելի է բացատրել մարդասիրական զգացմունքի այս աստիճան բթմնալը:

Առաջին փաստն այն է, որ մարդիկ անկեղծ կերպով հաւատացած էին և հաստատ համոզւած, թէ մարդկային հասարակութիւնն առաջ չի կարող գնալ մինչև նրա մեծ մասը չըլծի կառքումը և փոքրամասնութիւնը չնստի նրա մէջ: (Ախրը ասած կայ, թէ՛ «ես աղա, դու աղա, բա մեր աղունն ո՞վ աղայ»: Կարծես աղունն աղալու համար մէկն անպատեհաւ պէտք է աղա լինէր, և միւսը ծառայ, եթէ ոչ աղունն էլ չէր աղացել և մարդիկ քաղցած կը կոտորէին: Այսպէս էին հաւատացած թէ աղան և թէ ծառան դեռ այն ժամանակներում, երբ նրանց տարբերութիւնը շատ էլ աչքի չէր ընկնում, մինչ դեռ վերջերում քանի գնաց, այդ տարբերութիւնն այնքան մեծացաւ, որ ծառան ստիպուեց աղայի աղունն իր մէջքովն աղալ, դառնալով նրա բեռնակիրը և նրա լծկանն ու կթանը):

Երկրորդ փաստն ասելի էլ հետաքրքրական է և շատ նշանաւոր: Կառքում նստողները մի տարօրինակ համարումն ունէին իրանց մասին. նրանք երևակայում և հաւատում էին, որ իրանք մարդկային ցեղի բարձրագոյն տեսակիցն են, իսկ միւսները ստոր, և ստեղծւած են բարձրերին ծառայելու համար: Այս բանը հիմա ձեզ անհաւատալի կթւայ, բայց որովհետեւ ես ինքս էլ մի ժամանակ նոյն կառքում նստողներից եմ եղել և նոյն հաւատն ունեցել, կը յուսամ որ ինձ կը հաւատաք:

1887 թականին ես դառայ երեսուն տարեկան: Սա դեռ չէի ամուսնացել, բայց նոր արդէն նշանել էի օրիորդ Յուզէթի վրայ, որ Բօրալէտների տանիցն էր: Նա էլ ինձ նման ունէր իր սեփական տեղը կառքի մէջ, որովհետեւ հարուստ

տան աղջիկ էր: Այդ ժամանակներում, երբ ամեն մի սիրտուզելիք ձեռք էր բերւում միայն փողով, բաւական էր, որ աղջիկը միայն հարստութիւն ունենար, և նա կը գտնէր իր ուզած փեսացուն: Բայց իմ Յուդիթը ոչ միայն հարուստ էր, այլ ունէր նաև գեղեցկութիւն, թէ կազմի և թէ շարժումների մէջ, այսինքն թէ սիրունութիւն ունէր և թէ շնորհալիութիւն: Սա գիտեմ որ շնորհքի դէմ կը բողոքեն իմ ընթերցողուհիներս, գտնելով, որ ոչ մի շնորհք չէր կարող լինել այն ժամանակ, մի կանգուն բարձրութիւն ունէր նրանց գլխարկները, և փշած տիկերի էին նմանեցնում իրանց հագուստի միւս մասերը:

Այս յանդիմանութեան դէմ ոչինչ չունիմ, քանի որ քսաներորդ դարավերջում տիկիներն ու օրիորդներն աւելի չէնք ու շնորհքով են հագնւում և ճաշակներն աւելի է ազնւացած և գեղեցկացած, քան թէ ունէին իրանց տատերը անցեալ դարերում: Սա միայն այսքանը կարող եմ պնդել, որ ամենահրէշական հագուստն անգամ չի տգեղացնում գեղեցիկ սեռին, ինչպէս ես այդ տեսել եմ անցեալ դարում:

Մեր պսակը կատարւելու էր, հէնց որ լերջանար մեր նոր տան շինութիւնը: Նոր տունը շինւում էր քաղաքի ամենալաւ թաղումը, այսինքն քաղաքի այն մասումը, ուր որ միայն հարուստներն էին կենում: Պէտք է ասեմ, որ քաղաքի զանազան մասերում զանազան դասակարգեր և ազգեր էին բնակում, ոչ թէ խառն իրար հետ, այլ ջոկ ջոկ: Այլ էր հարուստների թաղը և այլ՝ աղքատներին: Թաղի լաւութիւնը տեղական դիրքից և յարմարութիւնից չէր կախւած, այլ բնակիչների յատկութիւնից, դրացիների բարձրութեան աստիճանից: Ուրեմն ամենալաւ թաղը ո՞րը կը լինէր, եթէ ոչ հարուստներին:

Սրբ տանս շինութիւնն սկսեց, ես հաշւում էի, որ նա պատրաստ կը լինի 1886 թւականի ձմեռը: Բայց այդ ձմեռն էլ անցաւ ու միւս տարւայ դարունն էլ եկաւ, իսկ իմ տան շինութիւնը չլերջացաւ և իմ պսակն էլ յետաձգեց անորոշ ժամանակով, որ մի անբախտ բան էր ամեն մի տաքարիւն փեսացուի համար: Շինութեան ուշանալու պատճառը այն գործադուլներն էին, որոնք կրկնւում էին ստէպ ստէպ: Յանկարծ չէին աշխատում այլ ևս ոչ քարտաշները, ոչ հիւաները, ոչ ներկարարները և ոչ միւս աշխատաւորները և գործը մնում էր կիսատ: Թէ ինչո՞ւ էին դադարեցնում դրանք իրանց աշխատու-

թիւնը, ես լաւ չեմ յիշում հիմա: Այն ժամանակներում գործադուլները մի այնպիսի սովորական բան էին դարձել, որ էլ ոչ դրի հետաքրքրութիւն չէին շարժում: 1873 թւականի արգիւնաբերական մեծ տագնապից սկսած գործադուլները կրկնուում էին անընդհատ երբեմն մէկ և երբեմն միւս արդիւնաբերական ճիւղի մէջ:

Քսաներորդ դարի ընթերցողը կը նկատի անշուշտ, որ արդիւնաբերութեան մէջ եղած այդ յուզմունքներն ու խռովութիւնները նախագուշակ նշաններ էին այն մեծ շարժման, որի հետևանքը եղաւ ներկայ հասարակական կազմակերպութիւնը իր բոլոր կենսական հետևանքներով: Այս բանը հիմա այնքան պարզ է, որ երեխան էլ կարող է հասկանալ, բայց այն ժամանակ, մարգարէ չլինելով՝ չէինք կարողանում գուշակել, թէ ինչ հետևանքի պիտի հասցնեն մեզ այդ շարժումները: Մենք զգում էինք միայն, որ արդիւնաբերական գործավարութեան մէջ վատասակի արդար բաժանում չկայ: Բանւորի և դրամատիրոջ յարաբերութիւնները խանգարել էին:

Բանւոր դասակարգը համարեա թէ մէկ անգամից ամենայն տեղ էլ սկսեցին դժգոհութիւն ցոյց տալ իրանց վիճակից և համոզւեցին, որ իրանց անտանելի վիճակը կարելի է լաւացնել, եթէ միայն դիտենան, թէ ինչ հնարքով և ինչ ձևով պէտք է անել այդ:

Ամեն կողմից սկսեցին պահանջել միաձայն որ իրանց օրավարձն աւելացնեն, աշխատանքի ժամերի թիւը պակասացնեն, բնակարանները լաւացնեն, հնար տան, որ բանւոր դասակարգն էլ կարողանայ կեանքի վայելքներից իր բաժինն ստանալ, նա էլ ունենայ միջոց կրթելու և զարգանալու: Այդ պահանջներին բաւականութիւն տալն անկարելի էր համարւում: Կարծում էին թէ բանւորների այդ արդարացի պահանջը կատարելու համար հարկաւոր կը լինէր որ երկիրն աւելի հարուստ լինէր քան թէ էր իսկապէս: Թէև բանւորները լաւ գիտէին, թէ ինչ էին ուզում իրանք, բայց չգիտէին, թէ ինչ ձևով պէտք է հասնէին իրանց նպատակին: Եթէ դուրս էր գալիս մէկը, որ նրանց դատի պաշտպանն էր հանդիսանում, բանւորները շրջապատում էին նրան և ամենայն ոգևորութեամբ բարձրացնում, բայց բանից դուրս էր գալիս, որ նա էլ չէր հասկանում, թէ ինչպէս պէտք էր նրանց ցաւի համար մի ճար գտնել: Որքան էլ որ ցնորական թւային բանւորները

ձգտումները, բայց այն միաբանական և միահամուռ պաշտպանութիւնը, որ նրանք ցոյց էին տալիս միմեանց զօրծաղուչների ժամանակ, այն զոհողութիւնները, որ նրանք անում էին իրանց ընդհանուր նպատակին հասնելու համար, այդ բոլորից երևում էր, որ նրանց դիտաւորութիւնը շատ լուրջ էր և խորին ուշադրութեան արժանի:

Բանւորների այդ բնական և բանական շարժումներն անւանում էին *անկարգութիւն*։—«Բանւորական անկարգութիւն»։ Թէ ինչ վախճան կարող էին ունենալ այդ անկարգութիւնները, այդ մասին իմ դասակարգի մարդոց կարծիքները տարբերում էին, նայած թէ ով ինչպիսի խառնածքի տէր էր, արդեօք տաճ բնաւորութիւն ունէր, թէ պաղ: Տաք մարդիկը պմեն ջանք գործ էին դնում ապացուցանելու, թէ բանւորների յոյսերը չեն կարող իրականանալ այն պարզ պատճառով, որ հասարակութիւնը միջոց չունի նրանց բաւականութիւն տալու: Մարդիկ սովից կը կոտորէին, եթէ չաշխատէին շատ, և չբաւականանային քչով: Եւ որովհետեւ ամբողջ աշխարհն աղքատ է, ուրեմն բանւորներն էլ պէտք է աղքատ լինեն, թէկուզ նրանց բանացնողները հարուստ լինին: Նրանք դեռ պէտք է շնորհակալ լինին այդ բանացնողներից, պէտք է օրհնեն և փառաբանեն նրանց, որ նրանց շնորհիւ ապրում են և քաղցից չեն կոտորւում: Ի՞նչ կը լինէր դրանց դրութիւնը, եթէ չլինէին հարուստ գործարանատէրեր և զրանց գործչտային:

Այն մարդիկը, որոնք աւելի քիչ տաքարին էին, համաձայն էին առաջինների կարծիքին: Նրանք ասում էին, որ բանւոր դասակարգի ցանկութեանը հնար չկայ բաւականութիւն տալու, բայց նրանք այդ չեն հասկանալ: Նրանք հաստատ կը մնան իրանց պահանջի վրա և ահազին յեղաշրջում կը գցեն հասարակութեան մէջ: Նրանց տրւած է քէի իրաւունք և միջոցներ էլ ունին իրանց ուզածն անելու: մանաւանդ որ առաջնորդներ էլ ունին, որոնք միշտ գրգռած են պահում նրանց և յորդորում են, որ մի այդպիսի խառնակութիւն ձգեն:

Այսին այնպիսի մարդիկ էլ, որոնք ենթադրում էին, որ այդ շարժումները կարող են հասարակական բոլոր ընդունւած կարգերը տակնուվրա անել: Այս կարգի մարդիկը ամեն բանի միայն մոլթ կողմն էին տեսնում, ոչ մի բանից բարի հետևանք չէին սպասում, և ինչ խաւար գուշակութիւններ ասես, որ

չէին անում: Դրանք առում էին՝ մարդկութիւնը հասել է քաղաքակրթութեան ամենաբարձր սահմանին և հիմա պիտի գլորւի դէպի ցած և ընկնի իր նախկին քառասական վիճակի մէջ: Այս արկածը նրան խելքի կը բերի, և նա նորից կսկսէ մագլցել դէպի վեր: Պատմական ժամանակներում քաղաքակրթութիւնը շատ անգամ է բարձրացել և գլորւել և էլի բարձրացել և գոցէ հէնց դրանով բացատրւի մարդկային գտնգի վրա եղած խորհրդաւոր ուռոյցքների նշանակութիւնը: Ինչպէս բոլոր մեծ շարժումները—օրինակ երկրի և բոլոր մոլորակների ու աստղերի—նայնպէս և մարդկային պատմութեան շարժումը մի ուղիղ գծով չի առաջ գնում դէպի անսահմանութիւնը, այլ սահմանաւորւած է մի պտոյտով: Շարժման գիծն սկսւում է մի կէտից և մի շրջան՝ կազմելով՝ գալիս է կրկին նախկին կէտի վրայից անցնում: Շարժումն իր սկսած տեղից հեռանում է, բայց որքան շատ է հեռանում, այնքան շուտ է մօտենում այն կէտին, որտեղից որ սկսել է իր շարժումը: Մարդը որքան շատ է հեռանում իր ծննդեան օրից, այնքան շուտ է մօտենում մահւան օրին: Այսպէս ահա՝ ամեն մի շարժում սահմանափակւած է մի շրջանով: Ընթացելով, թէ մարդկային առաջադիմութիւնը պիտի անհունա շարունակւի մի ուղիղ գծով, այդ գաղափարը մի ցնորք է և երևակայութեան ծնունդ, որովհետեւ այդ տեսակ շարժումը բնութեան մէջ չունի ոչ մի օրինակ: Գիտաւոր աստղի շարժագիծը աւելի լաւ է պատկերացնում մարդկային զարգացման պատմական ընթացքը: Բարբարոսութիւնը խաւարից վեր բարձրանալով դէպի արեգակը, մարդկութիւնը հասել է լուսաւորութեան ամենաբարձր զարգացմանը, նա հիմա պիտի ցածրանայ դէպի հակառակ ծայրը և ընկնի քառսի ստորին խաւերը:

Այս, ի հարկէ, մի ծայրայեղ աշխարհայեացք էր, բայց ես յիշում եմ, որ իմ ծանօթներից լուրջ խորհող մարդիկը միայն այսպէս էին խօսում, երբ որ խօսք էր լինում ժամանակի նորանշան երևոյթների մասին: Կասկած չկայ, որ բոլոր մտածող մարդիկը այն հայեացքն ունէին, որ հասարակութիւնը մօտենում է մի այնպիսի շրջանի, որ պէտք է խոշոր փոփոխութիւն առաջ բերէ: Բանւորական անկարգութիւնները, նրանց պատճառներն ու չափը, նրանց ընկճելու եղանակը—սրանք էին ահա գլխաւոր առարկան թէ տպագրութեան և թէ խօսակցութեան մէջ:

Հասարակաց կարծիքը այն աստիճանի լարւած էր, որ ենթադրւում էր, թէ կարելի էր նրան սարսափի մէջ ձգել: Այդ ժամանակ երևացին մի խումբ մարդիկ, որոնք անւանւում էին անիշխանականներ, և ուզեցին ահ ու սարսափ ձգելով հասարակութեան վրա, կատարել տալ իրանց դադափարը: Կարծես կարելի էր մի զօրաւոր ազգի, որ դեռ նոր էր ընկճել ահագին ապստամբութիւնը, վախեցնելով հարկադրել, որ նա ընդունի մի որ և է նորատեսակ հասարակական կազմակերպութիւն:

Նա ինքս էլ հարուստներից մէկը լինելով՝ բնականաբար պիտի պաշտպանէի գոյութիւն ունեցող կարգերը և իմ դասակարգի երկիւղն ունենայի: Մասնաւորապէս էլ ես ամենից շատ էի դրդուած բանւորների դէմ, որովհետև նրանց գործադուլների շնորհիւ՝ չարունակ յետաձգւում էր իմ ամուսնական բախտաւորութիւնը:

II

1887 թւականի մայիսի 30-դ օրը երկուշաբթի ընկաւ: Այդ օրն ազգային տօն էր և ասւում էր «Իրազարդաք», որովհետև այդ օրը զարդարում էին պսակներով այն զինւորների գերեզմանները, որոնք ընկիւ էին՝ Միացեալ-Նահանգների միջև եղած դաշնակցութիւնը պահպանելու համար արած պատերազմի մէջ: Այդ տօնը կատարւում էր շատ հանդիսաւոր և փառաւոր կերպով: Բոլոր ծերունի զինւորները՝ քաղաքական և զինւորական իշխանութիւնների հետ, երաժշտական խումբն առաջներին, չքեղ թափօրով՝ դիմում էին գերեզմանատուն, ուր և զարդարում էին թարմ ծաղիկներով և պսակներով ընկած զինւորների գերեզմանները: Յուզիթի մեծ հղբայրն ևս նոյն պատերազմումն էր նահատակել, այս պատճառով այդ օրը նրանց ամբողջ ընտանիքը գնում էր Մաունդ-Օրէր, ուր գտնւում էր գերեզմանատունը: Ես թոյլաւութիւն լնդընցի որ նրանց հետ գնամ, և երբ Իրեկոյեան դէմ վերադարձանք քաղաք, ես մնացի ճաշելու նշանածիս հօրանց տունը:

Ճաշից յետոյ հիւրասենեակումը նստած՝ ձեռքս առայ երեկոյեան լրագրի նոր համարը և կարդացի մի նոր գործադուլի մասին, որ արել էր Բանւորական Միութիւնը: Ուրեմն իմ չարաբախտ տան շինութիւնը կրկին պիտի յետաձգէր:

Յիշում եմ շատ լաւ, որ ես սաստիկ բարկացայ և սկսեցի առնիկ բոլոր բանւորներին իրանց գործադուլներով, իհարկէ այնպիսի խօսքերով, որ կարելի էր արտասանել տիկիներէ ներկայութեանը:

Խօսակիցներս բոլորովին համաձայն էին ինձ հետ: Այս առարկան արդէն առիթ դարձաւ ընդհանուր խօսակցութեան և բանւորների գրգռողների հասցէին այնպիսի յանդիմանութիւններ ուղղեցինք, որ եթէ լսէին, ականջները կը ծակուէին և կը խլանային իսկոյն: Ամենքն էլ միաբերան այն կարծիքն էին յայտնում, որ բանը քանի գնում, վատանում էր օրէցօր և վտանգաւոր դառնում:

Ամենից սոսկալին այն է, ասեց տիկին Բարսէտը, որ բանւորներն ամեն տեղ էլ կատաղել են: Ներպայումն աւելի էլ վատ է, քան թէ մեզանում: Խաղաղ ապրելու համար, ես չէի վստահանալ Ներպա տեղափոխել: Մէկ անգամ ամուսնուս հարցրի, թէ ուր լիտի գաղթենք, երբ կատարելու լինի այն բոլոր սոսկալի բաները, որոնցով սպառնում են մեզ այդ սոցիալիստները: Նա պատասխանեց, որ ներկայումս ինքը չգիտէ ոչ մի տեղ, ուր գոյութիւն ունեցող կարգերը խախտւած չը լինէին և սպառնալից, գուցէ միայն Գրէլանդիայում, Պատագոնիայում և Զինաստանում լինի խաղաղութիւն:

—Այդ չինացիք, ասաց մի ուրիշը, շատ լաւ էին իմանում, թէ ինչ են անում, երբ սր փակում էին արեւմտեան լուսաւորութեան առաջը և թոյլ չէին տալիս, որ իրանց երկիրը մտնի: Նրանք մեզանից լաւ էին իմանում, թէ ուր պիտի հասցնի մեզ այդ լուսաւորութիւնը և պարզ տեսնում էին, որ դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ դիմակաւորուած դինամիտ:

—Լաւ յիշում եմ, որ հէնց այդ ժամանակ ես մի կողմ քաշեցի Յուդիթին և աշխատեցի համոզել, որ չսպասենք մեր տան վերջանալուն և անմիջապէս պակկենք: Առաջի նաև, թէ մենք կարող ենք ճանապարհորդութիւն անել մինչև կարգի կը բերւի մեր բնակարանը: Այդ երեկոյին օրիորդը մի նոր գեղեցկութիւն էր ստացել իմ աչքումը: Սև սգազգեստը որ նա հագել էր նոյն օրւայ տխուր տօնի առիթով, աւելի էր պայծառացրել նրա սիրուն դէմքը: Այս ըոպէիս էլ նա ինձ պատկերանում է նոյն կերպարանքով: Երբ որ պիտի գնայի իմ տունը, Յուդիթն ինձ անց կացրեց մինչև նախադուռը և ես ըստ սովորութեան համբուրեցի նրան մնաս բարև ասելիս: Միշտ էլ այսպէս էի

հեռանում նրա մօտից, թէ գիշեր լինէր և թէ ցերեկ: Այս անգամայ հեռանալս առաջւաններից ոչնչով չէր տարբերուում: Ոչ մի նախազգացում թէ իմ և թէ նրա կողմից չերևաց, որ այս անգամայ մեր իրարից բաժանելը, սովորականից մի բանով աւելի էր, ոչ մէկիս սիրտը չախրեց:

Բայց, աւանդ, ով կարող է գուշակել իր գլխի գալիքը...

Նս աւելի շուտ հեռացայ այդ երեկոյին, քան թէ սովորութիւն ունին հեռանալու սիրահարւածները, բայց այս նշան չէր, որ ես քիչ էի սիրում իմ նշանածիս: Ինձ վրա անքնութեան ցաւ էր եկել, որից սաստիկ տանջւում էի, թէև առողջութեանս մասին զանգատելու տեղիք չունէի: Անցած երկու օր ու գիշերը աչքս չէի խփել ոչ մի ըսպէ, և այդ օրը սաստիկ յոգնութիւն էի զգում: Այս բանը գիտէր Յուդիթը և հէնց ինքն շտապեցրեց ինձ տուն գնալ և խստիւ պառւիրեց, որ տուն հասնեմ թէ չէ, իսկոյն պառկեմ քնելու:

Նս բնակւում էի իմ հայրական տանը, որ մնացել էր ինձ իբրև ժառանգութիւն: Այդտեղ բնակել էին շարունակ երեք սերունդ, որոնց միակ և վերջին ներկայացուցիչը ես էի: Դա մի սեռ և արդէն հնացած փայտաշէն տուն էր, ներսը չքեղ զարդարւած, թէև հին ճաշակով: Դրա գլխաւոր պակասութիւնը այն էր, որ գտնւում էր այն թաղումը, ուր շատացել էին գործարաններն ու իջևանները, իսկ այդպիսի տեղերում իմ գասակարգի մարդիկն անվայել էին համարում բնակել: Մշտքովս անգամ չէր անց կենալ, որ կարող էի այս տունը բերել մատաղահաս կնոջս, մանաւանդ Յուդիթի նման մի բնքոյշ էակին: Նւ արդէն յայտարարութիւն էի տւել տունս վաճառելու մասին, և այնտեղ մնում էի միայն գիշերելու, իսկ ճաշելու համար գնում էի կուրքը: Մի հատ սպասաւոր ունէի, հաւատարիմ նեգր, Սոյէր անունով, միայն նա էր մնում մօտս և կատարում էր իմ փոքրիկ պահանջները: Բայց այդ տան մէջ մի ջոկ յարմարութիւն կար, որից ես դժւարանում էի ձեռք վերցնել—այդ իմ ննջարանն էր, որ ես գիտութեամբ շինել էի աւել տան հիմքումը: Նթէ իմ ննջարանս լինէր վերին յարկումը, ես չպիտի կարողանայի քնել փողոցներում անընդհատ շարունակուող աղմուկից: Իսկ այդ ստորերկրեայ բնակարանիս մէջ ոչ մի շշուկ չէր թափանցում վերևից:

Նրբ որ ես մտնում էի նրա մէջ և դուռը փակում, ինձ չրջապատում էր մի տեսակ գերեզմանական լռութիւն: Սե-

նեակն խոնաւութիւնից ազատ պահելու համար, նրա յատակն ու պատերը սւաղել էի տւել ջրախիտ աւազով (այսինքն՝ այնպիսի աւազով կամ ցենտով, որի միջից խոնաւութիւն թափանցել չէր կարող՝ այստեղ *ջրախետ*՝ նշանակում է ջուր չը ծծող, ջրի համար անթափանցելի)։ Որպէս զի միևնոյն սենեակը լինէր և մի ասպնով պահարան, որ թէ գողերից ազատ մնար և թէ կրակից, կամարակապ առաստաղը շինել էի տւել խոշոր սալաքարերից, իսկ երկաթէ դուռը ծելիւ էի տւել չայրւող քարաւազի հաստ շերտով։ Առաստաղի միջով մի ջուխտ նեղափոր խողովակներ էին բարձրանում մինչև տան վերևի յարկը, ուր միանալով օդաշարժ դուրձիքի հետ, մաքուր էին պահում սենեակին օդը։ Սյգ խողովակներից մէկը դրսիցն էր մաքուր օդ ներս բերում՝ ներսինն էլ դուրս տանում։

Ել ինչ էր պակաս, որ այդ սենեակում բնակողը բոլորովին ապահոված լինէր անքնութեան դէմ, բայց ցաւ ասածդ ամեն տեղ էլ գտնում է իր որսը։ Հազիւ էր պատահում, որ երկու գիշեր միմեանց վրա կարողանայի հանգիստ քուն ունենալ։ Այնպէս էի սովորել անքնութեանը, որ ինձ համար ոչինչ բան էր ամբողջ գիշերներով անքուն մնալը, բայց երկու գիշեր շարունակ բազկաթոռի վրա լուսացնելն ինձ այնպէս էր յոգնեցնում, որ քնելն ինձ համար դառնում էր մի տանջանք, զգում էի նեարդային սաստիկ գրգռմունք։ Վախենալով նեարդային խանգարմունքից, ես սկսեցի սաստիկ զգուշանալ անքնութիւնից։ Հէնց որ քնահատութիւնս սաստկանում էր, դիմում էի բժիշկ Պիլսբերիի օգնութեանը։

Պիլսբերիին միայն քաղաքավարութեան համար էին բժիշկ անւանում, որովհետև նա վկայւած բժիշկ չէր և ինքն էր իրան բժիշկ անւանում, և «պւռօֆեսոր կենդանական մադնիսականութեան»։ Չեմ կարծում, որ նա բժշկական գիտութիւնից բան լինէր հասկանալիս. բայց նա շատ նշանաւոր էր իբրև կենդանական մադնիսատու։ Նրբ երկու անքուն գիշերներից յետոյ զգում էի, որ երբորդ գիշերն էլ չը պիտի քնեմ, ես իսկոյն կանչել էի տալիս Պիլսբերիին, որ գայ ինձ քնացնի իր ձեռաշարժութեան թովիչութիւնովը։ Ինչքան կուզի լարւած լինէին նեարդերս և որքան էլ անհանգիստ լինէի, բժիշկ Պիլսբերին շուտով խոր քնի մէջ էր ձգում ինձ, Հէնց որ քնում էի, այնպէս էլ մնում էի քնած, մինչև ինքը չգար և չգարթեցնէր սթափեցնող հնարներով։ Ջարթեցնելու հնարը շատ հեշտ

էր: Խնդրեցի բժշկին, որ այդ բանը սովորեցնի իմ ծառային, որ նա զարթեցնի ինձ իմ ուզած ժամին:

Միայն իմ ծառան գիտէր, թէ բժիշկ Պիլսբըրին ինչու համար է այցելում ինձ: Ի հարկէ, ես մտադիր էի ամուսնութիւնիցս յետոյ յայտնել Յուդիթին իմ գաղտնիքը, եթէ չարունակելու լինէր անքնութիւնս, բայց ես յոյս ունէի նաեւ, որ այնուհետեւ էլ այդ ցաւը չպիտի ունենայի: Իսկ մինչև այդ՝ ես չէի ուզում Յուդիթին յայտնել, առաջուց գիտենալով, որ նա թոյլ չէր տալ ինձ քնեածութեան ենթարկել, քանի որ նա էլ գիտէր, որ այդ ձևով քնանալը բաւական վտանգաւոր է և կարող էր ունենալ աղետաբեր հետեանք: Վտանգաւոր էր նրանով, որ քնեածութիւնը կարող էր չափից աւելի լինել և հասցնել մահաքնի, որից մագնիսատու բժշկին այլ ևս չէր կարող զարթեցնել և բանը կը վերջանար միայն անխուսափելի մահով, Բայց ես իմ յաճախակի արած փորձերիցս այն եպրակացութեան եկայ, որ ոչինչ վտանգ չի կարող լինել, եթէ հարկ եղած զգուշութիւնները դործ դրւին: Կարծում էի, որ այս կողմանէ կարող էի ապահովացնել իմ Յուդիթին, բայց յաջողութեան մասին մեծ յոյս չունէի:

Ինչպէս ասացի արդէն, Յուդիթին մնաս բարեւ ասելուց յետոյ՝ ես ուղղակի գնացի տուն և Սոյերիս ուղարկեցի Դիւսբըրին կանչելու, որ գայ ինձ քնացնի: Մինչև նորա գալը ես մտայ իմ ստորերկրեայ ննջարանը, հագուստս փոխեցի, հագայ խալաթս նստեցի բազկաթոռիս վրա և սկսեցի երեկոյեան փոստով ստացած նամակներս կարդալ: Դրանցից մէկը, որ իմ նոր շինելիք տան ճարտարապետն էր, հաստատում էր այն լուրը, որ ես կարգացել էի արդէն լրագրերում: Նա գրում էր, որ նոր գործադուլներն անհնարին են դարձնում տան շինութիւնը շարունակելու և նշանակած ժամանակին վերջացնելու, որովհետեւ գործատէրերի և գործաւորների միջև ծագած կռիւը շատ երկարատեւ կարող է լինել: Կալիֆոռնիան ցանկանում էր, որ բոլոր հռոմայեցիք մի գլուխ ունենային միայն, որ մի հարւածով կտրէր: Նամակը կարդալուց յետոյ ես ինքս էլ միևնոյն փափազն ունեցայ Ամերիկայի բանւորների վերաբերութեամբ: Բժշկի գալը վերջ տուա իմ մոռյլ մտածութիւններին:

Բանից երևաց, որ Սոյերը հազիւ էր կարողացել բժշկին ինձ մօտ բերել, որովհետեւ հենց այդ գիշերը նա պատրաստուելիս է հղիւ հեռանալ Բոստոնից: Սրբ հարցրի թէ ուրեմն ես

ինչ պիտի անեմ առանց նրան, նա մի քանի անուններ տուաւ, հաւատացնելով, որ նրանք էլ իր չափ գիտեն քնացնելու արհեստը:

Այս մասին միամտելուց յետոյ, ես Սոյերիս պատուիրեցի, որ ինձ ժամի իննին զարթեցնէ: Այնուհետեւ մտայ անկողնիս մէջ և անձնատուր եղայ բժշկիս թովչութեանը: Նեարդերս սաստիկ գրգռւած լինելով՝ այս անգամ ես աւելի ուշ կորցրի գիտակցութիւնս, բայց վերջապէս յաղթեցի և մի շատ քաղցր քուն եկաւ վրաս:

—Աչքերը բաց է անում արդէն: Աւելի լաւ կը լինի, որ առաջին րոպէին մեզանից միայն մէկին տեսնի այստեղ:

—Խոստացիր ուրեմն, որ իրան ոչինչ չես ասի:

Առաջին ձայնը առնացի էր, իսկ երկրորդը՝ կանացի: Երկուսն էլ չընջելով էին խօսում:

—Նայած՝ թէ նա ինչպէս կը զգայ իրան—պատասխանեց տղամարդը:

—Ոչ, ոչ, խոստացիր, — պնդում էր կանացի ձայնը:

—Մի մերժիր սրա խնդիրը, — չընջաց մի երրորդ ձայն, որ նոյնպէս կանացի էր:

—Լաւ, լաւ, ասեց տղամարդը: —Հեռացէք շուտով, նա արդէն ուշքի է գալիս:

Հագուստի խշիշոց դիպաւ ականջիս, և ես բաց արի աչքերս:

Մի գնդեցկադէմ տղամարդ, մօտ վաթսուցն տարեկան՝ Կանդնած էր մօտս և գլուխը կռացրած՝ ինձ էր նայում: Նրա դէմքի արտայայտութեան մէջ երևում էր թէ վշտակցութիւն և թէ համակրութիւն: Այդ մարդն ինձ բոլորովին անծանօթ էր: Ես թէք ընկայ արմուկիս վրա և սկսեցի դիտել շուրջս: Սենեակը դատարկ էր և նոյնպէս ինձ անծանօթ բոլորովին: Աչքերս դարձրի դէպի անծանօթ պարոնը:

—Ի՞նչպէս էք զգում ձեզ, հարցրեց նա ժպտալով:

—Այս ինչ սենեակ է, հարցրի ես պատասխանի փոխառէն: Ո՞րտեղ եմ ես:

—Իմ տանս էք, պատասխանեց նա:

—Ինչպէս եմ ընկել ես այստեղ:

—Այդ մասին մենք յետոյ կը խօսենք, երբ դուք աւելի ուժ կունենաք, իսկ մինչև այդ, խնդրում եմ ձեզ հանգիստ լինել: Դուք ձեզ բարեկամ մարդոց շրջանում էք գտնւում և

բոլորովին տպահովու ի՞նչպէս էք, առողջ էք զգում ձեզ:

—Ի՞նչ տարօրինակ հարց է այդ, ինչո՞ւ պէտք է առողջ չը լինեմ: Դուք ինձ այս ասացէք, թէ ի՞նչպէս է պատահել, որ ես ձեր հիւրն եմ դարձել, ի՞նչ է պատահել ինձ: Ի՞նչպէս եմ ընկել ես այստեղ, քանի որ ես քնած էի իմ սեփական տանը:

—Այդ բոլորը բացատրելու համար դեռ ժամանակ կու-
նենանք, ասեց իմ անծանօթ տանտէրս սիրալիւր ժպիտով: Այ-
ժըմ ձեզ հարկաւոր է հանգիստ լինել և չը վրդուիւել ամե-
նեին, մինչև լաւ կը կազդուրւէք, սա շատ օգտակար կը լինի:
Ինձ պէտք է լսէք որովհետեւ ես բժիշկ եմ:

Նս ձեռքիս բացասական շարժումով հեռացրի ինձանից
դեղի բաժակը և նստեցի անկողնում, թէև բաւական ջանք
գործ դնելով, որովհետեւ մի անսովոր գլխի պտոյտ էի զգում:

—Ես պահանջում եմ, ասացի, որ հէնց այս բոլորիս ա-
սէք ինձ, թէ ես սրտեղ եմ, և ի՞նչ էք շինում դուք ինձ մօտ:

—Յարգելի պարոն, պատասխանեց խօսակիցս - մի վրդու-
ւիք, խնդրում եմ ձեզ, Նս կը կատարեմ ձեր ցանկութիւնը,
բայց այն պայմանով միայն, որ դուք նախ և առաջ լսմէք այս
կազդուրիչ դեղը:

Նս լսեցի նրա տւած դեղը:

—Դուք ուզում էք իմանալ, թէ ինչպէս էք ընկել այս-
տեղ, սկսեց անծանօթը, —բայց այդ այնքան էլ հեշտ չէ,
ինչպէս դուք կարծում էք. որովհետեւ այդ մասին դուք ասելի
չատ բան գիտենաք, քան թէ ես: Հէնց նոր ահա զարթեցրինք
ձեզ երկարատև քնանալուց, կամ եթէ կուզէք ասելի ուղիղն
իմանալ—մահւանից: Այս է ահա ճշմարիտը, և ես այսքանը
գիտեմ միայն, մնացածը դուք ինքներդ պիտի ասէք ինձ: Դուք
ասում էք որ քնած էք եղել ձեր սեփական տանը: Խնդրեմ
ասէք այդ երբ է եղել:

—Ն...րը, բացականչեցի ես զարմանալով:—Նրբ պէտք է
լինէր, ի հարկէ, երեկ երեկոյին, մօտը տաս ժամին: Նս հրա-
մայեցի ծառայիս՝ Սոյերին, որ ինձ զարթեցնի առաւօտը տասը
ժամին: Ուր է Սոյերը:

—Նս չը գիտեմ որտեղ է ձեր Սոյերը, բայց համոզւած
եմ, որ նրա բացակայութիւնը բոլորովին ներելի է, պատասխա-
նեց խօսակիցս և նայեց վրաս զարմանալով:—Բայց ես կուզեմ
ասելի ճիշտն իմանալ, թէ ո՞ր օրը մտաք դուք այդ քնի մէջ,
կարո՞ղ էք ասել ինձ թիւը:

—Ի հարկէ երեկ երեկոյն կարծեմ ասացի ձեզ, եթէ միայն չեմ մնացել քնի մէջ ամբողջ օրը: Տէրիմ Աստուած, այդ անկարելի է, բայց միևնոյն ժամանակ ես այնպէս եմ զգում, որ կարծես աւելի երկար պիտի լինիմ քնած: Նս պառկեցի քնելու «Իրազարդարի» տօնի օրը:

—«Իրազարդարի»:

—Այո, երկուշաբթի, 30-ին:

—Ներողութիւն, որ ամսի երեսունին:

—Իհարկէ այս ամսի երեսունին, եթէ միայն ես չեմ քնել մինչև յունիսը որ անկարելի է:

—Հիմա սեպտեմբերն է:

—Սեպտեմբերն է: Ուրեմն մայիսից մինչև սեպտեմբերը քուն եմ եղել ես: Տէր ողորմեա... բայց այդ անհաւատալի է:

—Կը տեսնենք: Դուք ասում էք, որ մայիսի 30-ին էք քնել:

—Այո:

—Ներեցէք հարցնել, այդ որ թւականին էր:

Այս հարցն ինձ այնպէս վախեցրեց, որ ես աչքերս պըրշացրի նրա վրա և չկարողացայ ոչ մի խօսք ասել առաջի ընդէին:

—Ո՛ր թւականին, — հազիւ լսելի ձայնով արձագանք տւի ես նրա հարցումին:

—Այո, որ թւականին, եթէ թոյլ կը տաք ինձ հարցնել: Ձեր պատասխանը կօգնէ ինձ, որ ես ճիշտն ասեմ, թէ որքան ժամանակ էք քնած մնացել:

—1887 թւականին էր, — արտասանեցի ես վերջապէս:

Խօսակիցս հարկադրեց ինձ, որ էլի մի քանի կուս խմեմ իր դեղիցը, և տնտղեց իմ զարկերակս:

—Յարգելի պարոն, սկսեց նա, ձեր ձեւերը ցոյց են տալիս, որ դուք մի կըթւած մարդ էք, իսկ այդ, ինչքան ինձ յայտնի է, պարտաւորական չէր ամենի համար ձեր ժամանակում, ինչպէս ընդունւած է այժմ մեզանում: Կասկած չունիմ, որ դուք, ինչպէս լուսաւորւած մարդ, զիտէք արդէն, որ աշխարհիս վրա ոչ մի զարմանալի երևոյթ չկայ, որ անբնական լինի: Բոլոր երևոյթները բաւականաչափ պատճառներ ունին, նրանց հետեանքն էլ ուրեմն չատ բնական պիտի լինի: Կարծում եմ, որ ձեզ վրա սաստիկ կազդէ այն, ինչ որ ասելու եմ ձեզ, բայց յոյս ունիմ, որ դուք, ինչպէս խոհական մարդ, անձնատուր

չէք լինիլ ձեր հոգեկան յուզմունքներին: Ըստ երևոյթին՝ դուք հիմա հազիւ 30 տարեկան կը լինիք, իսկ ձեր առողջութիւնը համարեա ոչ մի տարբերութիւն չունի այն մարդու առողջութիւնից, որ նոր լինի զարթած շատ երկարատև և խոր քնից, մինչ դեռ այժմ սեպտեմբերի 10 ն է 2000 թւականի, ուրեմն ձեր քնափութիւնը տևել է ուղիղ հարիւր տասն երեք տարի, երեք ամիս և տասներմէկ օր:

Այս որ լսեցի, ես մնացի չլմած:

Խօսակիցս ինձ յորդորելով՝ մի բաժակ՝ չդիտեմ ինչ բանից եփած՝ խաշու լամեցրեց, որից յետոյ քունս այնպէս տարաւ, որ ես իսկոյն ընկղմեցի խոր քնի մէջ:

Երբ որ զարթեցի, սենեակս լուսաւորւած էր ցերեկայ լուսով, առաջին անգամ որ զարթեցի, սենեակիս լոյսն արևոստական էր:

Իմ խորհրդաւոր տանտէրը նստած էր մօտս: Երբ որ աչքերս բաց արի, նա դէպի իմ կողմը չէր նայում, և ես ազատ կերպով կարող էի դիտել նրան և մտածել իմ տարօրինակ վիճակիս մասին մինչև նա կիմանար իմ զարթեւելը:

Գլխիս պտոյտը բոլորովին անցել էր. ուշքս վրաս էր եկել, 113 տարւայ ընթանալու պատմութիւնը, որ ես առաջ ընդունեցի առանց հակաճառութեան, այժմ ինձ թւում էր մի յիմար կատակ, որով մի խաղ են խաղում ինձ հետ, բայց թէ ինչ նպատակով, այդ բացատրելու համար ես չէի կարողանում որ և է պատճառ գտնել: Կասկած չկար, որ մի անսովոր բան պատահել էր, — եթէ ոչ՝ ինչո՞ւ պէտք է ես զարթնէի մի օտար տան, ինձ անծանօթ մի պարոնի մօտ, բայց թէ ինչ էր պատահածը, այդ մասին իմ երևակայութիւնը չէր կարողանում վերահասու լինել, այլ միայն ցնորում էր գտնազան վայրենի ենթադրութիւններ: Արդեօք մի որ և է դաւադրութեան զոհ չէի ես: Այս ենթադրութիւնն ամենից շատ էր ճշմարտանման: Սակայն եթէ երբեմն կարելի է հաւատալ մարդու արտաքինին և դիմագծերին, այդ մարդու դիմագծերն այնքան ազնիւ էին, որ եթէ դաւադրութիւն էլ եղած լինէր, նա ոչ մի մասնակցութիւն ունեցած չպիտի լինէր նրանում: Յետոյ սկսեցի երեակայել, թէ մի գուցէ իմ բարեկամներն են անխոհմտութեամբ սարքել մի այսպիսի կատակ, ուզե՞նաւով ապացուցանել, թէ որքան վտանգաւոր է մագնիսական փորձերի ենթարկւելը: Բայց այս ենթադրութիւնը բոլորովին անհիմն էր, որով-

հետև նախ ոչ ոքի յայտնի չէր ոչ իմ ննջարանը և ոչ իմ արհեստական կերպով նիրհելս: Այս բանը Սոյերը չէր յայտնել, և այդ տեսակ կատակասէր բարեկամներ էլ չունէի: Այսու ամենայնիւ, թէ ես զոհ էի մի յիմար արարմունքի, այդ ենթադրութիւնն ինձ ամենից հաւանական էր թւում: Բոպէ առ ըստ սպասում էի, թէ հիմա՝ որտեղ որ է՝ մի ծանօթ երես կը տեսնեմ կամ բազկաթուռի ետևում և կամ վարագուրի քամակին թաք կացած իմ դրութեան վրայ ծիծաղելիս: Ես աւելի ուշի ուշով սկսեցի նայել սենեակի ամեն կողմը, բայց ոչ մի բան չնկատեցի, այլ տեսայ միայն, որ խօսակիցս արդէն նայում է դէպի ինձ:

— Դուք շատ անուշ քնեցիք և բաւական երկար, ամբողջ 12 ժամ, և կարող եմ ասել որ շատ կազդուրեց ձեզ, ասաց նա ուրախ ժպիտով:— Հիմա դուք բաւական թարմացած էք, ձեր գոյնն այժմ տեղն է եկել և աչքերդ պայծառացել: Հիմա պէտք է որ աւելի աւոողջ զգաք ձեզ:

— Ի՞նչ այսպէս աւոողջ չեմ եղած ես իմ օրումս, ասացի: Ես և նստեցի անկողնումս:

— Դուք անկասկած յիշում էք ձեր առաջին անգամ զարթնելը, շարունակեց նա,— յիշում էք անշուշտ և ձեր զարմանալը, երբ յայտնեցի ձեզ, թէ որքան ժամանակ էք քնած եղել:

— Այո, կարծեմ դուք ասացիք հարիւր տասներեք տարի:

— Ճիշտ այդպէս:

— Բայց համաձայնեցէք, որ այդ պատմութիւնը մի քիչ անհաւատալի է, ասացի ես հեգնական ժպիտով:

— Շատ տարակուսական է, ես համաձայն եմ, պատասխանեց նա,— բայց եթէ կատարւում է յայտնի պայմաններէ տակ, այլ ևս անհաւատալի ոչինչ չի մնում, և չի հակասում այն բոլորին, ինչ որ մենք գիտենք մահանինջի մասին: Լիակատար մահանինջի ժամանակ, ինչպէս որ եղել է ձերը, բոլոր կենսական գործողութիւնները դադար են առնում, մարմնակազմի ոչ մի հիւլէն չի վատնւում, չի ծախսւում, ինչպէս ասում են կենսաբանները: Անկարելի է սահման դնել այսպիսի մահանինջի տևողութեանը, եթէ արտաքին պայմանները պահպանում են մարդու մարմինը ֆիզիքական խորտակումներից: Ձեր մահանինջը մեզ յայտնի եղածների մէջ ամենից երկարատևն է: Եթէ դուք չգտնէիք հիմա, և ձեր սենեակը մնար անձեռնմխելի, դուք կարող էիք այդ վիճակի մէջ մնալ անսահման:

գարեւրի ընթացքում, մինչև վերջապէս երկրագնդի աստիճանաբար սառչելը կը գար կը հասնէր մինչև ձեզ, և միայն նա կը քայքայէր ձեր կեանքի թելերը և կազատէր ձեր հոգին:

Սա ստիպւած էի համաձայնել, որ եթէ իրաւի մի չար կատակի դո՛ւ էի ես, ապա նրա հնարողները մի շատ ճարտար գործակատար էին ընտրել իրանց նպատակին հասնելու համար: Այս պարոնն իր համոզիչ և գրաւող պերճախօսութիւնովը կարող էր ուժ ասես հաւատացնել, որ լուսինը պանրից է շինած: Իմ հեղեական ժպիտը, որով նայում էի ես նրա վրա, երբ նա ճառում էր մահանինջի մասին, ըստ երևութին բնաւ չէր շփոթեցնում նրան:

— Արդեօք չէ՞ք բարեհաճիլ շարունակել, ասացի ես, — և մի քանի մանրամասութիւններ հաղորդել, թէ ինչպէս գտաք յիշեալ սենեակը և նրա բնակչին: Սա շատ եմ սիրում հրաշալի հէքիաթներ լսել:

— Ներկայ դէպքում, պատասխանեց նա լրջօրէն, — ոչ մի հէքիաթ կարող չէ այնքան հրաշալի լինել, որքան բուն իրականութիւնը: Պէտք է ձեզ ասեմ, որ այս վերջին տարիներում ես միշտ մտածում էի այս տան ետևի մեծ պարտիզումը մի քիմիական գործարան շինել: Անցեալ հինգշաբթի օրը վերջապէս սկսեցինք հիմքի տեղը փորել: Այդ աշխատանքը նոյն օրը վերջացաւ և միւս օրն արդէն պիտի գային որմնադիրները: Հինգշաբթի գիշերը սաստիկ անձրև եկաւ և փորւած տեղը ջրով լցուեց: Իմ աղջիկը, որ հետս եկել էր պատահած աղէտը տեսնելու, իմ ուշագրութիւնը դարձրեց մի քարէ շէնքի անկիւնի վրա, որ դուրս էր ցըցւել գետնի տակից: Փոքր ինչ գետինը փորելով և նկատելով, որ դա մասն է միայն մի ամբողջ շէնքի, որոշեցի միանալ նրա ինչ շէնք լինելը: Իսկոյն կանչեցի մշակներին, որոնք քանդեցին հողը, և բաց արին մի ստորերկրեայ յատակ, ուր գետնից ութը ոտնաչափ ցածր էր և գտնուում էր մի հին տան հիմքի անկիւնի մօտ: Այդ յատակի վրայի մոխրի ու ածուխի շերտից կարելի էր գուշակել, որ նրա վրա եղած շէնքը հրդեհից այրւել է: Այդ յատակ աւաժը վերևից նման էր դամբարանի, կամարակապ շինած խոշոր քարաստիւրից: Նա մնացել էր անմնաս և ոչ մէկ տեղը չէր փչացել: Նա մի դուռն ունէր, բայց անկարելի եղաւ նրան կոտրել, և մենք նրա մէջը մտանք միայն՝ սալերից մէկը հանելով: Ներսից բարձրացող օդը սաստիկ ճնշւած չէր, չոր էր,

բայց սառը չէր: Լապտերի օգնութեամբ նրա մէջ իջնելով՝ ես տեսայ, որ դա մի սենեակ էր 19-րդ դարի ննջարանի ձևով կահաւորած: Անկողնու մէջ մի երիտասարդ էր պառկած: Թէ նա մեռած էր և այն էլ շատ վաղուց, գոնէ մէկ դար առաջ, այդ մասին կասկած չէր կարող լինել, բայց թէ ինչպէս էր պատահել, որ նրա մարմինը ոչ մի հետք չէր կրում քաջբայման, այդ էր, որ ապշեցրեց թէ ինչ և թէ իմ արհեստակիցնե-րին, որոնց ես հրաւիրեցի խորհուրդ կազմելու համար: Մենք չէինք հաւատում, որ մեր նախնիք քաջամուտ լինէին դիակ-ները զմուսելում, ուրեմն ինչպէս պէտք էր բացատրել այս ե-րևոյթը, եթէ ոչ նրանով որ հակառակ մեր կարծիքի նրանք զմուսելու արեւատը վերին աստիճանի կատարելութեան են հասցրած եղել: Բժիշկ ընկերակիցներս այնքան հետաքրքրե-ցին, որ ուզեցին անմիջապէս փորձեր անել, հետքի զմուսելու եղանակն ուսումնասիրելու համար, բայց ես նրանց թոյլ չտւի: Թոյլ չտալուս պատճառը այն էր, որ ես բոլորովին ու-րիշ կարծիքի էի, թէ նրանց չը յայտնեցի իսկոյն: Ծանօթ լինելով անցեալ դարի գրականութեանը, ես շատ անգամ էի կարդացել, որ ձեր ժամանակակիցներին շատ էր հետա-քրքրում կենդանական մազնիսականութիւնը: Շատ կարելի է, ասացի ես մտքումս, այս երիտասարդը ենթարկելով իրան մազնիսականութեան, խոր քնի մէջ է ընկղմել, և վերջն էլ ընկել է մահանինջի մէջ: Մարմնի անարատ մնալու գաղտնիքը ոչ թէ զմուսելու արեւատիցն է, այլ նոյն իսկ կենքիցը, որ դեռ ևս չի բաժանւել մարմնից: Հէնց որ ընկերներս հեռացան, ես իսկոյն սկսեցի ձեզ յարութիւն տալու փորձեր անել, որոնց արդիւնքը ձեզ արդէն յայտնի է:

Եթէ մեր խօսակցութեան առարկան դրանից էլ աւելի անհաւատալի բան լինէր, ով ասես կը հաւատար, եթէ պատ-մողը իմ անծանօթ բարեկամս լինէր, որի համոզող ոճն ու պատկառելի կերպարանքը լսողի վրա հմայելու չափ ներգոր-ծութիւն էին անում: Սա շատ նեղ դրութեան մէջ զգացի ինչ: Համ չէի հաւատում, համ չէի յանգնում ընդդիմախօսելու: Բայց ահա խօսակցութեան վերջում պատահմամբ երեսս ընկաւ պատից կախ արած հայելու մէջ և ես տեսայ իմ կերպարանքը: Տեղիցս վեր կացայ և մօտեցայ հայելուն: Դէմքս բոլորովին նոյնն էր, ինչպէս որ տեսել էի փողպատս կապելիս, երբ գնա-ւու էի նշանածիս մօտ այն անմոռանալի տօն օրը, որից, այս

մարդու ասելով՝ անցել է 113 տարուց դեռ մի բան էլ աւելի։ Այստեղ կրկին պատկերացաւ իմ երևակայութեանս մէջ այն անոնքի և սոսկալի խարէութիւնը, որի զոհն էի ես անկասկած։ Զայրութիւն վերին աստիճանի սաստկացաւ, երբ տեսայ, որ ինձ մի յիմար ապուշի տեղ են դնում։

—Դուք երեւի զարմանում էք, նկատեց խօսակիցս, որ ձեր կերպարանքը չի փոխւել, այլ միևնոյնն էք, ինչ որ հարկը տարի առաջ։ Պէտք չէ զարմանալ։ Եթէ դուք մազի չափ փոխէիք այլ ևս կենդանի մնալ չէիք կարող։

—Պարոն, սկսեցի ես, դէպի նրան շուռ գալով,—ես չեմ կարողանում հասկանալ, թէ ինչու համար դուք այդքան լուրջ կերպարանքով այդքան նշանաւոր անմտութիւն էք պատմում։ Դուք շատ լաւ գիտէք անշուշտ, որ դրանով ոչ ոքի չէք կարող խաբել, եթէ նա մի անյուսալի յիմար չէ։ Ապատեցէք ինձ այդ հնարովի հէքիաթներից և պատասխանեցէք ինձ կտրական իմ այս հարցին։—պիտի ասէք մարդավարի թէ ռոտեղ եմ ես կամ ինչու եմ ընկել այստեղ, կամ ինչպէս։ Եթէ չէք պատասխանի, ես ինքս կը գտնեմ իմ պատասխանը չնայելով ոչ մի արգելքի։

—Ուրեմն դուք չէք հաւատում, որ հիմա երկու հազար թւականն է։

—Միթէ դուք առանց կատակի անհրաժեշտ էք համարում հարցնել ինձ այդ մասին։

—Շատ լաւ ուրեմն, բացականչեց իմ արտասովոր տանտէրս,—որովհետև չեմ կարողանում ինքս համոզել ձեզ, կը համոզւիք դուք ինքներդ։ Զգում էք արդեօք ձեր մէջ այնքան ուժ, որ ինձ հետ բարձրանաք դէպի տանիքը։

—Ես այնքան ուժ ունիմ, որքան որ ունեցել եմ միշտ, պատասխանեցի ես բարկութեամբ,—և կարող եմ ապացուցանել ասածս, եթէ կը շարունակէք ինձ հետ ձեր կատակը ու ինձ յիմարի տեղ կը դնէք։

—Բայց ես խնդրում եմ ձեզ, պարոն, պատասխանեց խօսակիցս, շատ մի յափշտակէք այն մտքով, որ իբր թէ դուք մի զոհ էք խաբէութեան, եթէ ոչ՝ աւելի վատ կը լինի ձեզ համար, երբ կը համոզւիք որ ճշմարիտ են իմ բոլոր ասածներս։

Այն ցաւակցական եղանակը, որով նա արտասանեց այս խօսքերը, և այն որ նա չնեղացաւ իմ յանկարծական բարկա-

նալուս վրա, շատ տարօրինակ կերպով ազդեցին ինձ վրա և բոլորովին զինաթափ արին ինձ: Սա հետևեցի նրան և բարձրացայ տանիքի վրա եղած դիտարանը:

— Խնդրեմ նայեցէք ձեր չորս կողմը, ասաց նա, և ասացէք ինձ, սա ձեր 19-դ դարի Բոստօնն է արդեօք:

Իմ առաջն բացւեց մի ընդարձակ քաղաք: Լայն լայն փողոցները ձգւած էին մի քանի մղոն երկարութեամբ երկու կողմից ծառերով հովանաւորւած, հոյակապ տներով, որոնք մեծ մասամբ իրարից բաժանւած ընդարձակ այգիներով: Ամեն մի թաղում մի ընդարձակ և բաց զբօսավայր կար, զարդարւած ծառերով, որոնց միջից արձաններ էին նկատուում և շատրւանների ջրերն էին փայլիւում մայր մտնող արեգակի ճառագայթների տակ: Ամեն կողմից բարձրանում էին հասարակական շէնքեր, հոյակապ և վիթխարի մեծութեան:

Անկասկած ևս այս քաղաքը չէի տեսել երբէք և ոչ էլ սրա նման մի ուրիշը: Աչքերս բարձրացնելով դէպի հորիզոնը, նայեցի դէպի արևմուտք: Այն կապոյտ ժապաւէնը, որ այն պէս գալարւելով և պսպղալով գնում էր դէպի արևի մայր մտնելու տեղը, դա Չարլս գետը չէր միթէ ինձ ծանօթ պլտոյտներովը: Նայեցի դէպի արևելք. Բոստօնի նաւահանգիստն էր ձգւած իմ առջև, չրջապատւած իր հրաւանդաններովը, և կանաչագեղ կղզեակներովը:

Այստեղ ես տեսայ որ ինձ հետ պատահած հրաշքի մասին պատմածները ծայրէ ի ծայր ճշմարիտ էին:

IV.

Սա գիտակցութիւնս չկորցրի, բայց այն մտաւոր ջանքից, որ ես գործ դրի ինքս ինձ հաշիւ տալու համար, գլուխս սաստիկ պտըտեց, որից քիչ էր մնում ուշքս գնար: Յիշում եմ, որ ուղեկիցս նկատեց այդ և իր կուռն իմ կռան տակը գցած՝ ցած բերաւ մինչև վերի յարկը, ուր մի ընդարձակ սենեակում ստիպեց ինձ խմել մի բաժակ լաւ գինի և իր հետ մի թեթև նախաճաշիկ անել:

— Հիմա յուսով եմ, որ ամեն ինչ լաւ կանցնի և շուտով կը կազդուրւիք բոլորովին, ասեց նա ուրախ դէմքով. — Իսկապէս ես դիմելու չէի այդ կարուկ միջոցին ձեզ համոզելու համար, որ ես սուտ չեմ խօսում, բայց ձեր բարկութիւնից—որ

ի հարկէ ձեր վիճակի մէջ եղողին շատ ներելի է,—ստիպւեցի այդպէս վարւել: Ուղիղն ասեմ, աւելացրեց նա ծիծաղելով,— դուք ինձ կը ծեծէիք, եթէ չտապէի ասածս գործով ապացուցանել: Սա վախեցայ, մտաբերելով, որ ձեր ժամանակ, Բոստոնցիները յայտնի էին իբրեւ քաջ կռիւմաւորներ (մուշտով կռւողներ): Յուսով եմ, որ այլ ես չէք մեղադրիլ ինձ, որ ես ուզում էի խաբել ձեզ:

— Եթէ հիմա ասէք, որ հազար տարի է անցել այն օրւանից, ինչ օր^ը որ տեսել եմ այս քաղաքը վերջին անգամ, դարձեալ կը հաւատամ,—ասացի ես շատ յուզւած սրտով:

— Ոչ հազար, այլ միայն հարիւր տարի է անցել, բայց համաշխարհային պատմութեան մէջ հազարաւոր դարերում չեն եղած այսպիսի գերօրինակ փոփոխութիւններ:

— Իսկ հիմա, աւելացրեց նա, մեկնելով ինձ իր ձեռքը, սիրալիր սրտով թոյլ տւէք ինձ՝ սրտանց դիմաւորել ձեզ քանանքորդ դարի Բոստոնումը և յատկապէս այս տանը: Իմ անունս կիս է, իսկ պարագմունքով բժիշկ եմ:

— Իսկ ինձ կոչում են Իւլիան Վեստ — ասացի ես սեղմելով նրա ձեռքը:

— Շատ մեծ հաճոյք է ինձ համար՝ ծանօթանալ ձեզ հետ, պարոն Վեստ, պատասխանեց նա,—ինչպէս տեսնում էք, այս տունը շինւած է ձեր ընտանեացի տեղը, սրա համար էլ ես յոյս ունիմ, որ դուք սրանում այնպէս կը զգաք ձեզ ինչպէս ձեր տանը:

Նախաճաշից յետոյ բժիշկն ինձ առաջարկեց լսացել լողարանումը և փոխել հագուստս, որ ես ընդունեցի յօժարութեամբ:

Չնայած այն ահագին փոփոխութեանը, որ բարեկամիս ասելով՝ եղել էր ամեն բանի մէջ, ես այրական հագուստի մէջ մի առանձին փոփոխութիւն չնշմարեցի, բացի մի քանի մանր բաներից: Իմ նոր հագուստը որ շատ լաւ եկաւ վրաս, ոչնչով չը զարմացրեց ինձ:

Ֆիզիքապէս ես էլի նոյն մարդն էի, ինչ որ առաջ: Բայց ինչ դրութեան մէջ էր իմ բարոյական վիճակը, երբ յանկարծ զգացի ինձ մի նոր աշխարհ ընկած, գուցէ կը հարցնէ հետաքրքիր ընթերցողը: Այս հարցին իբրեւ պատասխան, կը խնդրէի ընթերցողիս, որ ներկայացնէ իրան մի ականթարթի մէջ երկրիցս տեղափոխւած կամ երկնքի արքայութիւնը և կամ Պուլ-

տոնի ստորերկրեայ թագաւորութիւնը: Ինչպէս կը զգար նա ինքն իրան այդ նոր աշխարհներում: Արդեօք նա իսկոյն իր թողած աշխարհի մասին կը մտածէր թէ՛ նրա նոր ցնցումն այնքան սաստիկ կը լինէր, որ հինը կը մոռանար առժամանակ, թէ՛ն յետոյ դարձեալ կը յիշէր: Իմ վերաբերութեամբ գոնէ այս վերջին ենթադրութիւնն էր ուղիղը: Նոր վիճակս այնքան սաստիկ զարմանք և հետաքրքրութիւն զարթեցրին իմ մէջ, որ ես ըիչ մնաց որ գլուխս էլ կորցնէի, ուր մնաց նախկին յիշողութիւններս, որոնք շատ յետոյ նորոգեցին իմ մէջ:

Նրբ որ ֆիզիքապէս բաւականաչափ կազդուրեցի բարի տանաիրոջս եռանդուն հոգացողութեան շնորհիւ, մենք կրկին բարձրացանք տանիքի դիտարանը, ուր նստեցինք փափուկ բազկաթոռների վրա: Այդ տեղից ամբողջ քաղաքը գտնուում էր մեր շուրջը ու ընկնում էր մեր ոտքի տակը: Իմ անհամար հարցումներիս պատասխանելուց յետոյ բժիշկ Լիտը ուզեց իմանալ, թէ՛ հին ու նոր քաղաքի միջև եղած տարբերութիւններից, ամենից աւելի ինչն է ինձ զարմացնում:

— Եթէ սկսեմ, ասացի, ամենաչնչին բաներից՝ զարմացնում է ինձ այն, որ նոր քաղաքի մէջ չեմ տեսնում ոչ ծուխ և ոչ ծխնելոյզ, մինչդեռ հինն այդ կողմանէ շատ հարուստ էր:

— Ինչ լաւ էք նկատել, բացականչեց իբրիշկը, — ես բոլորովին մոռացել էի ծխնելոյզները, որովհետեւ շատ վաղուց է, կարծեմ մօտ հարիւր տարի կը լինի, որ վերացել է հին ձևով տաքացնելը:

— Դրանից աւելի զարմացնում է ինձ, չարունակեցի ես, — ժողովրդի ներկայ հարստութիւնը: Այդ երևում է նրանից, որ քաղաքի բոլոր տները մէկ մէկ պալատի են նմանում, էլ ոչ խուղ կայ, ոչ խրճիթ: Նրևի ձեզանում այլ ևս աղքատ մարդիկ չկան:

— Ի՞նչ ասես, որ չտայի, եթէ կարողանայի գոնէ մի հատիկ աչքով նայել ձեր ժամանակի Բոստոնի վրա, պատասխանեց բժիշկը: — Ձեր ժամանակի քաղաքները պէտք է որ շատ անշնորհ բաներ լինէին եղած, ինչպէս վկայում էք ինքներդ: Եթէ դուք ճաշակ էլ ունենայիք նրանց չքեղացնելու, դարձեալ չէիք կարող, ժողովրդի աղքատութեան պատճառով, որ առաջ էր գալիս ձեր արգիւնաբերութեան գործի սխալ կազմակերպութիւնից: Բացի դրանից որ վերին աստիճանի զարգացած անհատակաւորութիւնը, որ ձեր ժամանակը գերակշիռ տեղ էր

ըռնում, ամեն բանի մէջ, չէր կարող հաշտ լինել համայնակեցութեան հետ: Այն փոքրիկ հարստութիւնն էլ, որ ունէիք դուք, վատնւում էր անհատների ճոխութեան վրա: Իսկ հիմա՝ ընդհակառակը՝ ամեն մի աւելորդ հարստութիւն զնում է յօգուտ քաղաքի բարեկեցութեան և բարեգարդութեան, որից ամենքն էլ օգտւում են հաւասար չափով:

Մեր խօսելու ժամանակ արեւը մայր մտաւ և գիշերը ցած իջաւ քաղաքի վրա:

— Մթնեց արդէն, ասաց բժիշկը, — վայր իջնենք. ես ուզում եմ ծանօթացնել ձեզ իմ կնոջ և աղջկայ հետ:

Եյստեղ մտաբերեցի, որ ես կանանց ձայներ էլ լսեցի այն ըուզէին, երբ սկսում էի արթնանալ: Հետաքրքրական էր տեսնել, թէ ինչպիսի էակներ են քսաներորդ դարի տիկիները, այս պատճառով ես ուրախութեամբ ընդունեցի բժիշկի առաջարկութիւնը:

Այն սենեակը, որ մենք հանդիպեցինք տանտիկնոջը և իր աղջկանը, ինչպէս և ամբողջ տան ներսը փայլում էր մեղմ լուսով, որ արեւստական էր անշուշտ, բայց ես չկարողացայ գտնել, թէ ինչ աղբիւրից էր բղխում այդ լոյսը: Տիկին Լիտը մի բարեկազմ, վայելահասակ և ինքն իրան լաւ պահպանած անձնաւորութիւն էր, մօտաւորապէս մարդուն տարեկից: Իսկ ինչ վերաբերում է աղջկանը, որ գտնւում էր պատանեկական ծաղկափթիթ հասակում, ես դեռ իմ կեանքումս տեսած չէի մի այսպիսի գեղեցկուհի: Նրա դէմքը մի հիացք էր, մութ-կապոյտ աչքերով, շարմաղ երեսով, ամենանուրբ և կանոնաւոր գծերով: Հիանալի էր մանաւանդ նրա չքեղ հասակի իդէալական վայելակազմութիւնը: Նա իր կանացի փափկութեան և քնքշութեան հետ ունէր և քաջաւորղնութիւն, վառվռուն և կենսալից աշխուժութիւն, որից զուրկ էին ժամանակի աղջիկները: Մի տարօրինակ զուգահիշական էր անունը նոյնպէս Յուդիթ էր:

Նրեկոյին մեր մէջ սկսեց մի այնպիսի խօսակցութիւն, որ մարդկային յարաբերութեան մէջ կարելի էր համարել մի եզակի պատահումնք, քանի որ երկու հակադիր վարքերի մարդկանց մէջ էր կատարւում այս խօսակցութիւնը: Մեր յարաբերութիւնը չէր կարող լինել շինծու և արեւստական, որովհետեւ երբ մարդիկ գտնւում են անբնական վիճակի մէջ, նրանցից հեռանում է ամենայն արեւստականութիւն և անբնակա-

նութիւն, (ինչպէս կեղծ քաջութիւնը վտանգի առջև դառնում է ճշմարիտ վախկոտութիւն, կեղծ հարստութիւնը՝ սնանկութիւն): Այնչի՛ մասին կարող էինք խօսել, եթէ ոչ այն տա-
րօրինակ դիպածի, որի շնորհիւ ես ընկել էի այս շրջանը: Այնքան նրբութեամբ և հետաքրքրութեամբ էին խօսում այդ մասին, որ կարծես արդէն սովոր լինէին ուրիշ դարերից եկած մարդոց հետ խօսելու: Իսկ ինչ վերաբերում է ինձ, ես չեմ մտաբերում, որ երբ և իցէ իմ ուղեղի ընդունակութիւնը այն-
քան կենդանի և թարմ եղած լինէր, ինչքան այդ երեկոյին: Ի հարկէ, ես ոչ մի բոլորով չէի մոռանում իմ զարմանալի դրու-
թիւնը, որ ինձ մի տեսակ տենդային, կամ ասել՝ բարոյական ազդեցութեան մէջ էր պահում:

Օրիորդ Յուդիթը համարեա թէ չէր մասնակցում մեր խօսակցութեանը, բայց ամեն անգամ, երբ իմ աչքերը՝ ձգւե-
լով նրա գեղեցկութեան մոգականութեան վրա կանգ էին առ-
նում նրա դէմքի վրա, ես նկատում էի, որ նա մի այնպիսի լար-
ւած ուշադրութեամբ է նայում ինձ վրա, որ կարծես հմայած լի-
նէր: Սրկի՜ ես չափազանց հետաքրքրում էի նրան, և զարմանալի
էլ չէ, քանի որ նա մի շատ զարգացած երևակայութեան տէր աղջիկ
էր: Թէև ես գիտէի, որ նրա հետաքրքրութիւնը մի կանացի պարզ
հետաքրքրութիւն էր միայն, բայց այնու ամենայնիւ դրանից
ես յուզւում էի, որովհետև հետաքրքրւողը շատ էր գեղեցիկ:

Բժիշկ Լիտը պակաս չէր հետաքրքրւած իմ պատմութիւ-
նովս, թէ ինչ հանգամանքների մէջ էին քնացրել ինձ իմ ստո-
րերկրեայ սենեակումս: Ամեն մէկն իր ենթադրութիւնն էր
շարտնում, թէ ինչպէս մոռացած լինին ինձ գետնի տակին, և
վերջապէս ամենքս միասին մի շատ հաւանական բացատրու-
թիւն գտանք, թէև, ի հարկէ կարելի չէ ասել, որ իրօք այդ-
պէս էլ եղած պիտի լինէր: Գետնի տակին գտնւած մոխրի
շերտը ցոյց էր տալիս, որ տունը հրդեհով էր ոչնչացած: Թոյլ
էինք տալիս, որ կրակն ընկած պիտի լինի հէնց այն գիշերը,
երբ ես քնած եմ եղել: Մնում էր միայն ենթադրել, որ իմ
ծառայ Սոյերն էլ այրւած պիտի լինի կրակի մէջ, մնացածն
արդէն բացատրւում էր հաւանական կերպով: Բացի ծառայիցս
և բժիշկ Պիլբերիից՝ ոչ ոք չգիտէր իմ սենեակի տեղը, և ու-
րովհետև բժիշկը հենց այն գիշերը դուրս էր եկել: Բոստոնից,
սուրման նա չէր էլ իմանալ, որ իմ տունը կրակ է ընկել: Իմ
ճարեկամներն ու ծանօթներն էլ այն եզրակացութեան են ե-

կել, որ ես հրդէհի ժամանակ այրւել եմ: Հրդէհի թողած աւե-
րակները քանդելիս՝ չեն դառել ստորերկրեայ սենեակը: Եթէ
նրա տեղը մի նոր հիմք փորէին նոր տուն շինելու համար,
այն ժամանակ, ի հարկէ կը գտնէին իմ սենեակը, բայց տի-
րող խառը ժամանակները և թաղի հեռաւորութիւնը արգելք
են եղել նոր շինութիւն կառուցանելու: Այգու միջի գտնւած
ահագին ծառերը, բոշկի ասելով, ցոյց էին տալիս, որ այդ
տեղին ոչ ոք ձեռք չի տւել շարունակ յիսուն տարի:

V

Եւր տիկիները հեռացան, թողնելով մեզ առանձին, այդ
ժամանակ բոշկը հարցրեց, թէ քու՞նս չի տանձում արդեօք:—
Եթէ կամենում էք քնել, ասաց, ձեր անկողինն արդէն պատ-
րաստ է, իսկ եթէ նստել էք կամենում, ես ուրախ կը լինեմ
շարունակի մեր խօսակցութիւնը:

—Սա էլ եմ ուշ չըւող թռչուններից, շարունակեց նա,—
և առանց չողքորթութեան եմ ասում, որ ձեզանից աւելի շա-
հագրդիւ խօսակից չեմ կարող երևակայել: Կարծեմ հազադէպ
բան է 19-դ դարի մարդու հետ խօսակցութիւն ունենալ:

Ուղիղն ասած, ես մի տեսակ երկիւղի մէջ էի, թէ ինչ-
պէս պիտի մենակ մնամ: Այս անծանօթ բարեկամներով չըջա-
պատած լինելով՝ նրանց համակրանքը վայելելով՝ ես էլի մի
կերպ կարողանում էի իմ մտաւոր հաւասարակշռութիւնը պահ-
պանել: Հէնց նրանց հետ եղած ժամանակն էլ, երբ մի ըոպէ-
սով խօսակցութիւնն ընդհատուած էր, գլխիս մէջ կայծակի ա-
րագութեամբ սլանում էր այն սրտի դողը, որ ես պիտի ունե-
նայի, երբ առանձին մնայի: Սա զգում էի, որ այս գիշեր ես
չպիտի կարողանամ քնանալ, իսկ պառկելու և մտածմունքնե-
րի մէջ ընկղմելու միտքն ինձ սարսափեցնում էր: Այս բանը ես
խոստովանւեցի բոշկին, և նա ինձ ասաց, որ այդ շատ բնական է
ձեր վիճակում եղող մարդու համար, որ դեռ չի ընտելացել
իր նոր դրութեան հետ, իսկ ինչ վերաբերում է ձեր հանգիստ
քնանալուն, ասաց, այդ մասին կարող էք անհոգ լինել որով-
հետեւ ես ձեզ մի այնպիսի դեղ կը տամ, որ ձեզ վրա անուշ
քուն կը բերէ մինչև առաւօտ, երբ դուք կը զարթոյն աշտարակ-
աւանդութեամբ, որ ձեզ կը թւայ, թէ նոր Բոստոնի բնիկ
քաղաքացի եք: